Արձանագրություն 2
/Протокол 2/

Վանաձոր համայնքի ավտոբուսների ձեռքբերում« ՀՀ ԼՄՎՀ ԲՄԱՊՁԲ-26/55» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պարզաբանում տրամադրելու մասին նիստի
Заседания оценочной комиссии о предоставлении разъяснений закупоки под кодом " HH LMVH BMAPDzB-26/55"для Предметом закупки является приобретение 45 автобусов для нужд общины Ванадзор

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «25» մայիսի 2026թ. ժամը 15:00-ին:
заседания Оценочной комиссии состоялось «25» мая 2026г. в 15:00.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Տ.Մելքոնյան*
Անդամներ
Խ.Մայիսյան, Է. Հակոբյան,
Գնումները համակարգող
Ն. Հովակիմյան
Принимали участие
Председатель комиссии: Т. Мелконян
Члены комиссии: Х.Маисян, Э. Акопян,
Координатор по закупкам Н. Овакимян

1. Պարզաբանում
1.Разъяснение

1.1 https://eauction.armeps.am/ համակարգի միջոցով 25"05"2026թ" ստացվել է պարզաբանում հետևյալ բովանդակությամբ՝

Խնդրում եմ տալ պարզաբանում
Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմին Հարգելի՛ գործընկերներ, «ԱՍԷԴԼ» ՍՊԸ–ն (ՀՎՀՀ՝ 00858578) 2004 թվականից ՀՀ–ում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն: Ծանոթանալով Վանաձորի համայնքի կարիքների համար 2026.05.15-ի «N1» հանձնաժողովի որոշմամբ սահմանված և ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ-26/55 ծածկագրով ավտոբուսների ձեռքբերման էլեկտրոնային աճուրդի հրավերի պայմաններին՝ հայտնում ենք, որ մեր ընկերությունը նախատեսում է մասնակցել նշված աճուրդին: Հրավերի ուսումնասիրության արդյունքնում մեզ մոտ առաջացել են մի շարք հարցեր, որոնց մասով խնդրում ենք հայտնել Ձեր դիրքորոշումները՝ Հարց Հ1 DAP (INCOTERMS 2020) մատակարարման պայմանի շրջանակներում պարտավորությունների հստակեցում Հրավերի համաձայն՝ մատակարարումը պետք է իրականացվի DAP Վանաձոր, ՀՀ (INCOTERMS 2020) պայմանով: Այս կապակցությամբ խնդրում ենք պաշտոնապես հստակեցնել և գրավոր հաստատել, որ DAP (Delivered At Place) պայմանին համապատասխան՝ մատակարարի պարտավորությունները համարվում են ամբողջությամբ կատարված այն պահից, երբ ապրանքը (ավտոբուսները) մատակարարվում և տրամադրվում են գնորդին՝ ՀՀ, ք. Վանաձոր, պայմանագրով սահմանված հասցեում: Միաժամանակ խնդրում ենք հաստատել, որ ավտոբուսների Վանաձորում նշված հասցե մատակարարելուց հետո՝ • մաքսային ձևակերպումների, • ներմուծման մաքսատուրքի, մաքսավճարների, ԱԱՀ–ի և օրենքով սահմանված այլ հարկերի վճարման, • պետական հաշվառման և գրանցման, • համապատասխան սերտիֆիկատների, թույլտվությունների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի ստացման, • ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ պահանջվող հետագա վարչարարական գործընթացների իրականացումը հանդիսանալու է Գնորդի՝ Վանաձորի համայնքապետարանի պարտականությունը և պատասխանատվությունը: Մատակարարի կողմից պայմանագրի շրջանակներում նախատեսվում է՝ • ապահովել ավտոբուսների մատակարարումը DAP Վանաձոր պայմանով, • ներկայացնել համապատասխան հաշիվ-ապրանքագիր (Invoice), • և կատարել պայմանագրով նախատեսված մատակարարի պարտավորությունները մինչև ապրանքի հանձնման պահը: Հարց Հ2 Քանզի

ապրանքի մատակարարումը նախատեսված է DAP պայմանով, որը ենթադրում է գնորդի կողմից ապրանքի ներմուծման հետ կապված բոլոր ծախսերի կատարում, խնդրում ենք պարզաբանել, թե գնորդի կողմից ներմուծման գործընթացը կազմակերպելու համար ե՞րբ և ի՞նչ արժույթով (արտարժույթի դեպքում նաև ինչ փոխարժեքով) Հաշիվ–ապրանքագիր (Invoice) պետք է ներկայացնել: Նշեմ որ տվյալ դեպքում մենք չենք կարող ներկայացնել Հաշիվ–ապրանքագիր ՊԵԿ–ի էլեկտրոնային համակարգում, քանզի ապրանքի մատակարարման վայրը Հայաստանի Հանրապետությունը չէ (չնայած, որ ապրանքը հանձվելու է Վանաձոր քաղաքում): Հարց Հ3 Հրավերի 2.2 կետով նախատեսված գնահատումը պարտադի՞ր է, թե՞ որոշվում է մասնակցի ցանկությամբ Հարց Հ4 Հրավերի՝ 7.4 կետ «7.4 Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Իսկ եթե սույն ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա և գնման հայտով սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը գերազանցում է 25 մլն. ՀՀ դրամը, ապա հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 120 (մեկ հարյուր քսան) աշխատանքային օր:» Հաշվի առնելով 7.4 կետը և օրենքի պահանջը խնդրում եմ նշել հայտի ապահովման օրերը՝ 90 օր, թե՞ 120 օր Հարց Հ5 Հրավերի՝ 10.2 կետ «Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:» Պայմանագրում այս դրույթը ինչպե՞ս է կիրառվելու: Որոնք են այն պայմանագրային պարտավորությունները, որոնք հանգեցնում են պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Հրավերի՝ 10.2 կետ «Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ:» Ձևակերպումից անհասկանալի է երբվանից է սկսվում և երբվանից է ավարտվում պայմանագրի ապահովումը: Խնդրում եմ պարզաբանել: Հարց Հ6 Հրավերի՝ 10.5 կետ «10.5 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով (հավելված՝ 4.2):» Պայմանագրի արժեքի մինչև քա՞նի տոկոս կանխավճար կարելի է նախատեսել Պատվիրատուից և ի՞նչ փուլերով և ժամկետներում: Հարց Հ7 Հրավերը կազմված է երկլեզու՝ հայերեն և ռուսերեն: Որ լեզուն է հի՞մք ընդունվում և ո՞րտեղ է դա սահմանվում: Հարց Հ8 Հայերեն և ռուսերեն հրավերի և տեխնիկական բնութագրի տեքստերում կան անհամապատասխանություններ: Օրինակ՝ - «Закупка осуществляется на территории Республики Армения.» - «Все сборы (расходы), которые должен понести продавец, включая налоги, пошлины, транспортные расходы, расходы на страхование, премии и ожидаемую прибыль, должны быть включены в предлагаемую цену в соответствии с условиями DAP Ванадзор, Армения (INCOTERMS 2020).» Հայերեն տարբերակում, այս տեքստերը կամ իրավացիորեն բացակայում են կամ այլ բան է գրված: Արդյո՞ք ռուսերեն և հայերեն տարընթերցումների ժամանակ հիմք է ընդունվելու հայերեն տարբերակը: Կարո՞ղ ենք առաջարկով հանդես գալ, որպեսզի ռուսերեն տեքստը համապատասխանեցվի հայերեն տեքստին: Հարց Հ9 Հավելված 5 2.1 Գնորդն իրավունք ունի՝ 2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի: Խնդրում եմ ասել, արդյո՞ք հնարավոր է 5 օրվա ուշացման ժամկետը երկարացնել, օրինակ 1 ամիս, կամ ավելի երկար: Հարց Հ10 Հավելված 5 6.2 և 6.5 կետեր 6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով: 6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով: Խնդրում եմ նշված կետերի համար ավելացնել «սակայն ոչ ավել քան պայմանագրի 5%» տեքստը: Հարց Հ11 Հավելված 5 6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում: Եթե ավտոբուսները ներմուծվելու են 1

խմբաքանակով, ապա «չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում» արտահայտությունը կվերաբերվի խմբաքանակի՞ն, թե թվով 45 յուրաքանչյուր ավտոբուսին: Այս մասով ևս խնդրում ենք նախատեսել «ոչ ավել, քան պայմանագրի 5%-ի չափով» տեքստը: Խնդրում ենք տրամադրել պաշտոնական պարզաբանում/գրություն վերոնշյալ հարցերի վերաբերյալ: Կանխավ շնորհակալություն համագործակցության համար: Հարգանքով՝ "ԱՍԷԴԼ" ՍՊԸ տնօրեն՝ Էդուարդ Ագիկյան

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0
Было принято решение: за-3, против-0

3. Պարզաբանման պատասխան
3.Уточняющий ответ

Հարց 1

Տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված DAP ք. Վանաձոր, ՀՀ (INCOTERMS 2020) մատակարարման պայմանին համապատասխան՝ Մատակարարի պարտավորությունները համարվում են պատշաճ կատարված այն պահին, երբ ապրանքը (ավտոբուսները), տրանսպորտային միջոցից բեռնաթափման պատրաստ վիճակում, տրամադրվում է Գնորդին պայմանագրով նախատեսված վայրում՝ ՀՀ, ք. Վանաձոր հասցեում (ներառյալ՝ համապատասխան մաքսային հսկողության գոտում):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ DAP (INCOTERMS 2020) կանոնի շրջանակներում ներմուծման մաքսային ձևակերպումների իրականացումը (այդ թվում՝ մաքսային հայտարարագրումը), ներմուծման մաքսատուրքերի, մաքսավճարների, ԱԱՀ-ի, բնապահպանական հարկի և օրենքով սահմանված այլ հարկային պարտավորությունների վճարումը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառումն ու գրանցումը, համապատասխան սերտիֆիկատների (այդ թվում՝ համապատասխանության կամ կոնստրուկցիայի անվտանգության սերտիֆիկատների), թույլտվությունների և այլ անհրաժեշտ ուղեկցող փաստաթղթերի ստացումը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հետագա վարչարարական գործընթացների իրականացումը հանդիսանում են Գնորդի բացառիկ պարտականությունն ու պատասխանատվությունը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Մատակարարը/վաճառողը պարտավոր է ապահովել ավտոբուսների տեղափոխումն ու մատակարարումը DAP Վանաձոր (INCOTERMS 2020) պայմանով, ներկայացնել պայմանագրով և կիրառելի միջազգային առևտրային պրակտիկայով նախատեսված ուղեկցող փաստաթղթերը, ներառյալ՝ հաշիվ-ապրանքագիրը (Invoice), միջազգային տրանսպորտային բեռնագիրը (CMR/Bill of Lading) և փաթեթավորման թերթիկը (Packing List), ինչպես նաև կատարել պայմանագրով նախատեսված իր բոլոր պարտավորությունները մինչև ապրանքի փաստացի հանձնման-ընդունման պահը:

Հարց 2

Տեղեկացնում ենք, որ ապրանքի մատակարարումը DAP Վանաձոր պայմանով իրականացնելու դեպքում, քանի որ գնումը կատարվում է ՀՀ տարածքում և գործարքի կողմերը հանդիսանում են ՀՀ ռեզիդենտներ, գործընթացը պետք է կազմակերպվի տեղական արժույթով: Սա նշանակում է, որ Գնորդին ներկայացվող հաշիվ-ապրանքագիրը (Invoice) և ՊԵԿ էլեկտրոնային համակարգով դուրս գրվող հարկային հաշիվը պետք է լինեն միայն ՀՀ դրամով, ինչի արդյունքում արտարժույթի փոխարժեքի հաշվարկման կամ վերահաշվարկի անհրաժեշտություն ընդհանրապես չի առաջանում:

Ժամկետային առումով, այս հաշիվը Գնորդին պետք է տրամադրվի այն պահին, երբ ապրանքը ֆիզիկապես մուտք է գործում մաքսային պահեստ, և Գնորդը պատրաստվում է սկսել դրա վերջնական մաքսազերծումն ու բացթողումը ներքին սպառման համար: Առանց Վաճառողի կողմից տրված ՀՀ դրամով հաշվի, Գնորդը պարզապես չի կարողանա մաքսատանը հիմնավորել ապրանքի ձեռքբերման արժեքը և լրացնել մաքսային հայտարարագիրը:

Ինչ վերաբերում է ՊԵԿ էլեկտրոնային համակարգում (e-Invoicing) հաշիվ դուրս գրելուն, ապա Ձեր մտավախությունն այն մասին, որ մատակարարման վայրը ՀՀ-ն չէ, իրավական հիմք չունի: Քանի որ ապրանքի փաստացի հանձնումը կատարվում է Վանաձոր քաղաքում (ՀՀ տարածքում), ապա ըստ ՀՀ Հարկային օրենսգրքի՝ մատակարարման վայրը միանշանակ համարվում է Հայաստանի Հանրապետությունը: Հետևաբար, Վաճառողը ոչ միայն կարող է, այլև պարտավոր է ՊԵԿ համակարգով դուրս գրել սովորական հարկային հաշիվ՝ ՀՀ դրամով և ներառյալ ԱԱՀ-ն: Մաքսային ձևակերպումների հեշտացման համար այդ էլեկտրոնային հաշվին կից կարող է կազմվել նաև ազատ ոճի թղթային Invoice, դարձյալ ՀՀ դրամով:

Գնորդը մաքսային պահեստից ապրանքը հանելիս մաքսատանը կվճարի ներմուծման մաքսատուրքերն ու ներմուծման ԱԱՀ-ն:

Հարց 3

Պարտադիր չէ:

Հարց 4
Սույն ընթացակարգը չի կազմակերպվում <<Գնումների մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, ուստի հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օրը:

Հարց 5
Հավելված 4-ի 5-րդ կետով սահմանվում է . Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ-26/55 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ:

Հարց 6
Սույն ընթացակարգի համար պատվիրատուն կանխավճար չի սահմանել:

Հարց 7, հարց 8
Գնումների մասին 526-Ն որոշման 34-րդ կետի 1-ին ենթակետը հաշվի առնելով հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

Հարց 9
Հիմք ընդունելով պայմանագրի 8.8 կետը ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Հարց 10,11
Առաջնորդվել պայմանագրի 6.2,6.3,6.5 կետերով:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0
Было принято решение: за-3, против-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Տ. Մելքոնյան / Т. Мелконян /
Председатель комиссии

հանձնաժողովի անդամներ՝ _____ Խ. Մայիսյան / Х.Маисян /
Члены комиссии

_____ Է. Հակոբյան / Э. Акопян /

Գնումները համակարգող՝ _____ Ն. Հովակիմյան/ Н. Овакимян /
Координатор по закупкам